Հայաստանի Հեռագրական Գործակալութեան մասին։ — Յօդ. 1) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան նպատակն է՝ հաղորդել Հայաստանի ներսը և արտասահման քաղաքական, տնտեսական, ֆինանսական եւ հասարակական հետաքրքրութիւն ներկայացնող տեղեկութիւններ։

Յօդ. 2) Հայաստանի Հեռագրական Գործակալութիւնը գտնւում է Հայաստանի Կառավարութեան կից, գործում է Նախարարների Խորհրդի անմիջական հսկողութեան տակ և առաջնորդւում է նրա հրահանգներով։

Յօդ. 3) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան Վարչութիւնը գտնւում է Հայաստանի մայրաքաղաքում։

Յօդ. 4) Հայաստանի Հեռագրական Գործակալութիւնը կարող է մայրաքաղաքից և երկրից դուրս ունենալ բաժանմունքներ կամ գործակալներ, որոնք հաստատւում են գործակալութեան վարիչի կարգադրութեամբ։ Գործակալութիւնը կարող է անմիջապէս համաձայնութեան մէջ մտնել ուրիշ հեռագրական գործակալութիւնների հետ՝ նրանցից տեղեկութիւններ ստանալու նպատակով։

Յօդ. 5) Հայաստանի Հեռագրական Գործակալութեան գործերի ղեկավարութիւնը, ինչպէս նաև պաշտօնեաներ հրաւիրելն ու արձակելը, աշխատակիցներին վարձատրութիւն նշանակելը վերապահւում է գործակալութեան վարիչին։

Յօդ. 6) Գործակալութիւնն իրաւունք ունի պետական հեռագրով ամէն օր տալ ձրի մինչև 600 բառով հեռագիր թէ Հայաստանի սահմաններում և թէ արտասահման։ Պարլամենտի նստաշրջանում բառերի այս քանակը կարող է կրկնապատկւել, եթէ գործակալութիւնը հաղորդում է Պարլամենտի նիստի հաշւետուութիւնը։

Յօդ. 7) Յօդ. 6-ում յիշւած բառերի քանակից (600 բառ) աւելի համար գործակալութիւնը վճարում է գոյութիւն ունեցող հեռագրավճարի 50%։

Յօդ. 8) Գործակալութեան թղթակիցների Հայաստանի դանազան մասերից գործակալութեան անունով ուղարկւած հեռագիրները հեռագրատունը հաղորդում է ձրի։ Նոյնպէս ձրի են հաղորդւում և գործակալութեան հեռագիրները իր բաժանմունքին և գործակալների անունով։ Նմանապէս եւ գործակալութեան փոստային առաքումները կատարւում են ձրի, համահաւասար կառավարական առաքումներին։

Յօդ. 9) Գործակալութիւնն իրաւունք ունի օրական երկու անգամ ձրի խօսել (ամէն անգամ 5 րոպէ) միջպետական և միջքաղաքային հեռախօսով։ Նշանակւած ժամանակից աւելի խօսելիս վճարւում է արժէքի կէսը։

Յօդ. 10) Գործակալութիւնն իր ստացած հեռագիրները ձրիաբար ուղարկում է այն հիմնարկութիւններին և անձերին, որոնց ցուցակը ներկայացնում է Պարլամենտի Նախագահութիւնը և Նախարարների Խորհուրդը։

Յօդ. 11) Արգելւում է գործակալութեան հեռագրների արտատպումը գործակալութեան բիւլլետեններով լոյս տեսնելուց յետոյ, 48 ժամւայ ընթացքում։

Յօդ. 12) Սոյն օրէնքով վերացւած է համարւում Հայաստանի Խորհրդի կողմից 1918թ. դեկտ. 18-ին ընդունւած օրէնքը «Հայաստանի Հանրապետութեան հեռագրական գործակալութիւն հիմնելու մասին»։

Յօդ. 13) Սոյն օրէնքը իր ոյժի մէջ է մտնում Պարլամենտի Նախագահութեան կողմից հրատարակման օրից։

(Հաստատւած է 1920թ. ապր. 9-ին)